Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Coalition to stop violence against women

ՏԱՐԵԿԱՆ ԼՐԱԹԵՐԹ

ՀՈՒԼԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021

Սույն լրաթերթն ամփոփում է

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի

2021 թվականին կատարած գործողությունները եւ միջոցառումները:

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա

Երևան, 2022 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը 2021 թ. մտավ լրջագույն մարտահրավերներով: 2020 թ.-ի Ղարաբաղյան երկրորդ պատերազմի արհավիրքների պատճառով երևան եկան նոր սոցիալ-տնտեսական, անվտանգային, ներքաղաքական և արտաքին քաղաքական ճգնաժամեր: 2021 թ.-ին հետպատերազմական հայաստանյան քաղաքական և հասարակական դիսկուրսներում գերիշխող էին ժողովրդավարությունը և մարդու իրավունքները անվտանգությանն ու պատերազմին հակադրելու պատումները ու միտումները, աճեց տոքսիկ ազգայնականության և միլիտարիզմի հռետորաբանությունը: Մյուս կողմից կորոնավիրուսային համավարակն էլ ավելի ահագնացավ 2021 թ.-ին, ինչն էական սոցիալական, տնտեսական և առողջապահական ազդեցություն ունեցավ բոլորի վրա: Կորոնավիրուսային համավարակի հետևանքով առաջացած աննախադեպ գլոբալ գնաճը մտել է յուրաքանչյուր քաղաքացու տուն, և ՀՀ քաղաքացիների մեծամասնությունն այսօր ավելի վատ է ապրում, քան նախորդող տարիների ընթացքում: Կորոնավիրուսի համավարակը խիստ բացասական ազդեցություն է ունեցել կանանց և աղջիկների վրա՝ հատկապես նրանց առողջության, սեռական և վերարտադրողական առողջության խնդիրների լուծման, կրթության և աշխատանքային իրավունքի, ընտանեկան բռնության դեպքերի աճի տեսանկյունից:

Ցանկացած ճգնաժամային իրավիճակ սրում է արդեն իսկ առկա հիմնախնդիրները, և համավարակի, հետպատերազմական դրության պայմաններում կանանց իրավունքների ոտնահարումները, գենդերային հիմքով բռնությունը, ընտանեկան բռնությունը և այլ վնասակար պրակտիկաները Հայաստանում մարդու իրավունքների ոտնահարումների հիմնախնդիրների շրջանակում էին:

2010 թվականից ի վեր «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան (այսուհետ Կոալիցիա) շարունակաբար ահազանգում է, որ Հայաստանում գենդերային հիմքով բռնությունը, ընտանեկան բռնությունը համակարգային բնույթ են կրում, արդյունավետ կանխարգելում չկա, պետական քաղաքականությունը անհամաչափ է, խնդիրները հատուկ լուսանցքայնացվում են, ինչի պատճառով կանայք սպանվում են իրենց ընտանիքներում: Չնայած Հայաստանի Հանրապետությունը 2017 թ.-ին ընդունել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք, սակայն կանանց նկատմամբ բռնությունը նվազեցնելու ուղղությամբ պետության իրականացրած քայլերը ցայսօր էլ խիստ թերի են:

Սույն լրաթերթը ամփոփում է 2021 թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում կոալիցիայի իրականացրած հիմնական գործողությունները՝ ըստ կոալիցիայի ռազմավարական ուղղությունների, որոնք են.

1. Կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնության դեպքերի կանխարգելում:
2. Կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնության խնդիրների վերաբերյալ պետության հաշվետվողականության բարձրացում:
3. Կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային հիմքով բռնության և հարակից թեմաների շուրջ կարողությունների զարգացում:

«Ես պատկերացնում եմ, որ Կոալիցիան այն մարմինն է, որն ի վերջո կայուն համակարգ պետք է ստեղծի բռնության ենթարկված անձանց պաշտպանության համար կանանց իրավունքների օրակարգում: Երբ այդ օրակարգը ստեղծվի և լիարժեք գործի, այդ ժամանակ Կոալիցիան կարող է գնալ այսպես ասած «հանգստանալու», բայց մոտակա ապագայում, տասը տարում դեռ չեմ պատկերացնում»:

Հասմիկ Գևորգյան, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի 10 տարվա պայքարի մասին ֆիլմից

ԳԼՈՒԽ 1.

ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի կարևորագույն ռազմավարական ուղղությունն է կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնության բոլոր ձևերի կանխարգելումը: Այս ռազմավարական ուղղության շրջանակներում Կոալիցիան, Կոալիցիայի անդամ կազմակերպությունները տարիների ընթացքում իրականացնում են գենդերային բռնության, ընտանեկան բռնության մասին իրազեկվածության բարձրացման բազմաթիվ միջոցառումներ և արդեն իսկ հաջողել են փոխել հանրության վերաբերմունքը գենդերային հիմքով բռնության, ընտանեկան բռնության թեմաների շուրջ՝ մշտապես պահելով այս հիմնախնդիրները հանրության և մեդիայի ուշադրության կենտրոնում: 2021 թ.-ը ևս բացառություն չի եղել, և Կոալիցիան շարունակել է մասնակցել գենդերային բռնության, ընտանեկան բռնության թեմաներով կազմակերպված մամուլի ասուլիսների, հեռուստատեսային և առցանց հաղորդումների. Կոալիցիայի ներկայացուցիչները խնդրի վերաբերյալ տվել են բազմաթիվ հարցազրույցներ՝ թիրախավորելով հանրության լայն շրջանակների: Կոալիցիայի գործունեության, գենդերային և ընտանեկան բռնության մասին տեղեկատվության մեկ այլ աղբյուր է Կոալիցիայի կայքը, որը պարբերաբար թարմացվում է: 2021 թ.-ին այն մատչելի է դարձել նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Կոալիցիան մեդիայում (2021 թ.)

412 նյութ/հրապարակում մեդիայում
(գենդերային հիմքով բռնության,
ընտանեկան բռնության,
Կոալիցիայի գործունեության թեմաներով)

Գրեթե 500 000 դիտում

Կոալիցիան գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության ոլորտներում ճանաչված վստահելի «փորձագետ» է, ունի լայն ներկայացվածություն հայկական մեդիա տիրույթում: Վերջին տարիներին մեդիայի, սոցիալական մեդիա տիրույթների ուսումնասիրությունները փաստում են, որ հանրության իրազեկվածությունը ընտանեկան բռնության, գենդերային հիմքով բռնության թեմաների շուրջ շեշտակի աճել է: Նկատելի աճել է նաև հանրության անհանդուրժողականությունը ֆիզիկական բռնության, ծեծի, կնասպանության դեպքերի առնչությամբ, սակայն դեռ շատ անելիքներ կան՝ կոտրելու գենդերային կարծրատիպերը, հատկապես զոհի «մեղավորության» կարծրատիպը: Սոցիալական մեդիայում կանանց որոշ խմբերի դիտարկումը թույլ է տալիս եզրահանգել, որ կանայք այսօր ավելի իրազեկ են իրենց իրավունքների մասին և քաջալերում են միմյանց՝ դիմելու օգնության, երբ խախտվել է ինչ-որ մի այլ կնոջ իրավունք: Բնականաբար, վերջին տարիներին Կոալիցիայի իրականացրած գործունեությունը անմիջական առնչություն ունի թեմայի շուրջ հանրության իրազեկվածության բարձրացման վրա:

Գենդերային բռնության 16-օրյակի շրջանակներում՝ 2021 թվականի դեկտեմբերի 6-ին, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը համատեղ իրականացվող ծրագրային գործողություններով ներկայացրին «Իմփակտ ինովացիաների ինստիտուտ» ՍՊԸ-ի ստեղծած «SafeYOU» առցանց, անվտանգ հավելվածի նորացված տարբերակը:

Հավելվածի նպատակն է ապահով առցանց միջավայր ստեղծել կանանց և աղջիկների համար, որտեղ նրանք կարող են իրազեկվել, ստանալ մասնագիտական խորհրդատվություն, ինչպես նաև բռնության պարագայում ահազանգել մասնագիտական աջակցություն տրամադրող կառույցներին:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» (Ընտանեկան բռնության մասին օրենքի) ենթաօրենսդրական ակտերի մշակում ոստիկանության ընթացակարգերի շուրջ

Կոալիցիայի անդամ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն իրականացրել է լայնածավալ հետազոտություն, ինչի արդյունքում պետական մարմինների, տեղական և միջազգային փորձագետների հետ համագործակցությամբ մշակել է ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության խնդիրների առնչությամբ ոստիկանության համար անհրաժեշտ ընթացակարգերի փաթեթ՝ գործող օրենսդրության շրջանակներում: Մշակված և առաջարկվող մեխանիզմներն ու ընթացակարգերը ոստիկանությանը տալիս են համապատասխան ընթացակարգային գործիքներ ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության տարբեր ասպեկտների վերաբերյալ: Սա հույժ կարևոր գործողություն է, քանի որ ոստիկանության ծառայողները միշտ չէ, որ համապատասխան վերապատրաստում են անցել, և սովորաբար ծառայության անցնելիս ունենում են բավականին կանխակալ վերաբերմունք, կրում են հասարակության մեջ առկա կարծրատիպերն ու նախապաշարումները:

Այս գործողության շրջանակներում մշակվել են տարբեր ընթացակարգեր այն մասին, թե ինչպես պետք է ոստիկանության աշխատակիցները արձանագրեն ընտանեկան բռնության դեպքը, իրականացնեն ռիսկերի գնահատում, տարբերակեն բռնարարին, հավաքագրեն անհրաժեշտ ապացույցներ, ճանաչեն ինքնասպանության մտքերը, աշխատեն ընտանեկան բռնության ենթարկված երեխաների, ինչպես նաև այն տուժողների հետ, որոնք չեն ցականում բողոքել, մինչև իսկ երբ հանել բռնարարին ոստիկանության հաշվառումից և այլն:

Սեռական բռնության մասին իրավական և քաղաքականության փաստաթղթերի մշակում

Կոալիցիայի անդամ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն 2021 թ.-ին մշակել է առողջապահության և կրթական ոլորտների համար հետևյալ փաստաթղթերը.

1. *«Սեռական ոտնձգությունների կանխարգելման ընթացակարգ» քաղաքականությունը Հայաստանի համալսարանների համար:*

Այս քաղաքականության նպատակն է մշակել կրթական հաստատություններում սեռական ոտնձգություններին արձագանքելու մեխանիզմներ: Քաղաքականությամբ համալսարաններին առաջարկվում է ստեղծել կոմիտե, որը պարբերաբար տեղեկատվություն կտարածի սեռական ոտնձգության մասին, սույն քաղաքականության մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչ պետք է անեն, ուր պետք է դիմեն այն ուսանողները, որոնք ենթարկվել են սեռական

ոտնձգության:

2. *Փոխկապակցված փաստաթուղթ, որը ներառում է ընթացակարգեր և առաջարկություններ սեռական ոտնձգության քաղաքականության իրականացման վերաբերյալ:*

3. *Առողջապահական համակարգի համար առաջարկությունների փաթեթ, որը նպատակաուղղված է՝ փոփոխելու և բարելավելու ներկայիս դատաբժշկական պրակտիկան:*

ՍԲՃԿ-ն, երկար տարիներ աշխատելով սեռական բռնության ենթարկված անձանց հետ, Առողջապահության նախարարությանն է ներկայացրել առաջարկությունների փաթեթ, որտեղ մասնավորապես առաջարկում է ստեղծել ԴՆԹ դատաբազա· «rape kit» (անհրաժեշտ իրերի փաթեթ, որը թույլ է տալիս հավաքել և պահպանել սեռական բռնության ֆիզիկական ապացույցները), ինչպես նաև փոփոխության ենթարկել գործող դատաբժշկական պրակտիկան և հնարավորություն տալ սեռական բռնության ենթարկված անձանց առողջապահական աջակցություն ստանալ ցանկացած առողջապահական կետրոնում՝ միևնույն ժամանակ պահպանելով սեռական ոտնձգության դեպքի հետ կապված հավաքագրված ապացույցները, սակայն չստիպելով այդ մասին անհապաղ հայտնել ոստիկանությանը:

«ՄԻԱՎ-ով ապրող կանանց և թմրամիջոցները ներարկային օգտագործող կանանց շրջանում գենդերային բռնության դրսևորումները ՀՀ-ում» հետազոտություն



Կոալիցիայի անդամ «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ն իրականացրել է ՄԻԱՎ-ով ապրող և թմրամիջոցները ներարկային օգտագործող կանանց շրջանում գենդերային բռնության դրսևորումների վերաբերյալ ամբողջական ու ծավալուն քանակական և որակական տվյալների հավաքագրում՝ նպատակ ունենալով բացահայտելու հասարակական, ինստիտուցիոնալ, համայնքային և անհատական մակարդակներում բռնության դրսևորումների առանձնահատկությունները: ՄԻԱՎ-ով ապրող և թմրամիջոցները ներարկային օգտագործող կանայք ունենում են բազմաթիվ՝ առողջապահական, իրավական, սոցիալ-հոգեբանական և այլ խնդիրներ, որոնք պայմանավորված են տարաբնույթ հանգամանքներով: Այս խմբերի ներկայացուցիչներն իրենց կյանքի ընթացքում հաճախ են ենթարկվում բացասական վերաբերմունքի, բռնության և խտրականության, ինչը հաճախ խախտում է միջանձնային և ընտանեկան հարաբերություններում իրավահավասարության սկզբունքները, խոչընդոտում է տարբեր ոլորտներում ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը՝ հանգեցնելով սոցիալական դրության ապակայունացմանը: Այս և

այլ հանգամանքներով պայմանավորված՝ թիրախային խմբերի ներկայացուցիչները հիմնականում օտարվում են սոցիալական համակարգից իրենց առջև ծառացած հիմնախնդիրների հետ մեկտեղ՝ հնարավորություն չունենալով լիարժեքորեն օգտվելու սեփական իրավունքներից և ազատություններից կամ իրագործելու դրանք: Ուստի ՄԻԱՎ-ով ապրող և թմրամիջոցները ներարկային օգտագործող կանանց համար կյանքի տարբեր ոլորտներում գենդերային հավասարության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների վրա հիմնված համապատասխան հանրային քաղաքականության առկայությունը, որակյալ ծառայությունների տրամադրումը, սոցիալ-մշակութային պայմանների փոխակերպումը և հասարակության իրավագիտակցության բարձրացումը կարող են դրական ազդեցություն ունենալ ինչպես նրանց կյանքի որակի փոփոխության և բարելավման, այնպես էլ սոցիալական համակարգին վերաինտեգրվելու վրա: Սույն ուսումնասիրության հիման վրա մշակվել և տարբեր գերատեսչություններին են ներկայացվել նաև համապատասխան առաջարկություններ:

Կանանց նկատմամբ բռնության դրսևորումները քրեակատարողական հիմնարկում. հետազոտություն

Կոալիցիայի անդամ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն սկսել է ուսումնասիրել կանանց նկատմամբ բռնությունը քրեակատարողական հիմնարկում, որը նպատակ ունի վեր հանելու փակ հաստատությունում կանանց նկատմամբ բռնության դրսևորումները: Ուսումնասիրության հիմքում հետևյալ հետազոտական հարցերն են.

- Որո՞նք են միջազգային և տեղական իրավական կարգավորումները՝ նախատեսված փակ հաստատություններում կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելման համար: Որո՞նք են այն ինստիտուցիոնալ բացթողումները, որոնք հնարավորություն չեն տալիս լուծելու առկա խնդիրներն ու բացթողումները:
- Որո՞նք են ոլորտում գործունեություն ծավալող փորձագետների և այլ դերակատարների գնահատմամբ կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնության կանխարգելման և առկա խնդիրների լուծման մոտեցումները և հնարավոր ուղղությունները Հայաստանի փակ հաստատություններում:
- Ինչպիսի՞ քաղաքականություններ և պրակտիկաներ պետք է որդեգրեն հիմնական գործորդները փակ հաստատություններում գենդերային հիմքով բռնության դեպքերին արդյունավետ կերպով արձագանքելու և դրանք կանխարգելելու դիտանկյունից:

Հետազոտության վերջնական տարբերակը և հիմնական բացահայտումները, ինչպես նաև առաջարկությունների փաթեթը կհրապարակվի 2022 թ.-ին:

Ընտանեկան բռնության դեպքերով դատական մշտադիտարկում

2021 թ.-ի ընթացքում Կոալիցիայի անդամ «Իրավունքի ուժ» ՀԿ-ն մշակել է ընտանեկան բռնության դեպքերով գենդերային զգայուն գործիք, որը հնարավորություն է տալիս մշտադիտարկելու ընտանեկան բռնության թեմայով դատական գործերը և արձանագրել, թե որքանով է իրականացվում և գործում Ընտանեկան բռնության մասին օրենքը:

Այս հետազոտության շրջանակներում Կոալիցիայի անդամներ «Իրավունքի ուժ» և «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ները սերտորեն համագործակցում են միմյանց հետ: Հետազոտության սկզբնական փուլում «Իրավունքի ուժ» ՀԿ-ն արդեն իսկ մշտադիտարկել է ընտանեկան բռնության 6 դեպք, որոնցից 3-ը Երևանում, մնացած երեքը Շիրակի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում:

Աջակցություն Covid 19 համավարակից տուժած կանանց

Կորոնավիրուսային համավարակի բռնկումից ի վեր Կոալիցիայի անդամ կազմակերպություններն արագորեն վերափոխեցին իրենց ծրագրերն ու ծառայությունները՝ համապատասխանեցնելով դրանք ստեղծված իրադրությանը, ինչպես նաև Կոալիցիայի անդամ կազմակերպությունների շահառուների փոփոխվող կարիքներին: Կոալիցիան արագորեն իրականացրեց ռեսուրսների մոբիլիզացում և ֆոնդահայթայթում: Ուշադրության կենտրոնում էին հատկապես ընտանեկան, գենդերային հիմքով բռնության, սեռական բռնության ենթարկված կանայք, սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող կանայք, առողջական խնդիրներ ունեցող կանայք, ԼԲՏ կանայք, ՄԻԱՎ-ով ապրող կանայք, գյուղական համայնքներում բնակվող կանայք և ուրիշներ: Կոալիցիայի անդամ կազմակերպությունները այս խմբերի կանանց տվել են տարբեր տեսակի աջակցության փաթեթներ, փոխհատուցել են որոշ կանանց կոմունալ ծառայությունների համար ծախսված գումարը, տրամադրել են տնտեսական փաթեթներ, անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաներ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում սոցիալական աշխատողի, հոգեբանի և իրավաբանի խորհրդատվություն: Կոալիցիայի աշխատանքը այս կանանց և նրանց ընտանիքների հետ, ինչպես նաև համավարակի ընթացքում պետության արձագանքը ցույց տվեցին, որ նմանատիպ իրավիճակներում գործելու համար պետության կողմից առավել համապարփակ, ընդգրկուն և երկարաժամկետ ծրագրերի ներդրման և իրականացման անհրաժեշտություն կա:

Կոալիցիայի անդամ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն նաև թեժ-գիծ ծառայության միջոցով տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն համավարակից 37 տուժած կանանց:

Կոալիցիան 2021-2022 թթ. ընթացքում ընտանեկան բռնության ենթարկված, համավարակից տուժած կանանց և այլ շահառու խմբերի 256 կանանց տրամադրել է տարբեր տեսակի ծառայությունների փաթեթներ, որոնց հանրագումարային արժեքը նշված ժամանակահատվածի համար արժե 11,870.17 եվրո կամ 6,409,891 ՀՀ դրամ:

Արդեն իսկ վեր հանված կարիքների հիման վրա՝ Կոալիցիան 2022-ին կշարունակի նմանատիպ ծառայությունների փաթեթների բաժանումը նրանց, ովքեր ունեն դրա կարիքը:

Աջակցություն Covid 19 համավարակից տուժած նախաձեռնություններին, խմբերին և քաղհասարակության կազմակերպություններին

Այս աջակցության շրջանակներում Կոալիցիան, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, ենթադրամաշնորհներ է տվել քաղհասարակության այնպիսի կազմակերպությունների և նախաձեռնությունների, որոնք աշխատում են կանանց իրավունքների, մասնավորապես՝ գենդերային հիմքով բռնության և ընտանեկան բռնության խնդիրների հասցեագրման ոլորտներում: Ենթադրամաշնորհ ստացած կազմակերպություններից էին.

- «Բերդի կանանց ռեսուրսային կենտրոն հիմնադրամ» ՀԿ
- «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ
- «Երիտասարդ Տավուշ» ՀԿ
- «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ
- «Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն ՀԿ
- «Կանանց իրավունքների տուն» ՀԿ
- «Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ

Ընդհանուր դրամաշնորհի գումարը՝ 8526 եվրո:

Բոլոր ծրագրերը միտված էին աջակցելու բռնություն վերապրած կանանց՝ ձեռք բերելու նոր հմտություններ, անհրաժշտ տեխնիկա՝ տնտեսական խնդիրները լուծելու, ինչպես նաև Covid 19 համավարակի և պատերազմի հետևանքները մեղմելու համար: Ծրագրերն իրականացվել են Արմավիրի, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի, Շիրակի և Կոտայքի մարզերում:

ԳԼՈՒԽ 2.

ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի ռազմավարական մյուս կարևոր ուղղությունը կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնության խնդիրների վերաբերյալ պետության հաշվետվողականության բարձրացումն է, որի շրջանակներում Կոալիցիան նախաձեռնում և իրականացնում է թե՛ հետազոտություններ, թե՛ բարձրացնում և ներառում է կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնության թեման տեղական և միջազգային հարթակների օրակարգերում, թե՛ իրականացնում է համապատասխան գործողություններ, որպեսզի Հայաստանում գենդերային հիմքով բռնության, ընտանեկան բռնության, կանանց և աղջիկների իրավունքների առնչությամբ ՀՀ օրենսդրության մեջ լինեն համապատասխան օրենսդրական ակտեր, որոնք բավարարում են և չեն հակասում մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Ավելին, Կոալիցիան աշխատում է նաև բարձրացնելու գենդերային բռնության թեմայի ինտերսեկցիոնալությունը:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (CEDAW)

Կոալիցիան մշակել և Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտե է ներկայացրել հարցերի շրջանակ, որն անդրադառնում է այնպիսի խնդիրների, ինչպիսիք են գենդերային կարծրատիպերը և կանանց նկատմամբ խտրականությունը, կրթության մեջ առկա գենդերային կարծրատիպերը, կանանց մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքին, առողջության՝ ներառյալ սեռական և վերարտադրողական առողջության իրավունքը, կանանց աշխատանքային իրավունքները, գենդերային հիմքով բռնության դրսևորումները և այլն: Կոմիտեին ներկայացրած հարցերի շրջանակը բարձրաձայնում է Covid 19 համավարակի ազդեցությունը կանանց տնտեսական, վերարտադրողական խնդիրներին, ինչպես նաև թե որքանով են համավարակի շրջանակներում տրամադրված սոցիալական աջակցության ծրագրերն ու ծառայությունները հասանելի եղել ընտանեկան բռնության ենթարկված կանանց և այլ հարցեր:

Հարցումներ պետական տարբեր գերատեսչությունների

Կոալիցիան իր գործունեության հարցերի, ռազմավարական ուղղությունների իրականացման շրջանակներում համապատասխան հարցումներ է հղել պետական տարբեր գերատեսչությունների.

- Տեղեկատվության հարցումներ Արցախից տեղահանված կանանց, Ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետևանքով կին բանտարկյալների, Ադրբեջանում պահվող գերիների վերաբերյալ:
- Լանզարոտեի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ (հարցումներ Արդարադատության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Առողջապահության նախարարություն):

Գենդերային զգայուն առաջարկություններ

Կոալիցիան ներկայացրել է գենդերային զգայուն և գենդերային բռնության թեմային առնչվող առաջարկություններ e-draft հարթակում հետևյալ փաստաթղթերի առնչությամբ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի նախագիծ, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, ՀՀ Հաշտեցման մասին օրենքի նախագիծ և այլ ենթաօրենսդրական ակտերում:

Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ

Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի հերթական նիստի ժամանակ Կոալիցիայի անդամ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն ներկայացրել է «Ընտանեկան բռնության արձագանքման մարտահրավերներն ու բացերը ՀՀ-ում» զեկույցը: Զեկույցում ներառված բազմաթիվ օրինակները մատնանշում և ցույց են տալիս համակարգում առկա բացերը, որոնց լուծման նպատակով ներկայացվում են առաջարկներ՝ հիմնված տեղական և միջազգային լավագույն փորձի վրա: Առաջարկներից մի քանիսը տարբեր պատկան մարմինների ներկայացուցիչների շարունակական վերապատրաստումների, օրենսդրական փոփոխությունների, բազմազան համայնքային ծառայությունների ներդրման առնչությամբ են:



Covid-19-ի ազդեցությունը կանանց իրավունքների վրա Հայաստանում

Կոալիցիան 2021 թ.-ի ընթացքում իրականացրել է «Covid-19-ի ազդեցությունը կանանց իրավունքների վրա Հայաստանում» հետազոտությունը, որի միջոցով փորձ է արվել վերհանելու կորոնավիրուսային համավարակի ազդեցությունը կանանց իրավունքների վրա Հայաստանում՝ ուսումնասիրելով 2020 թվականի մարտ-սեպտեմբեր ժամանակահատվածը: Հետազոտությունը բաղկացած է երկու հատվածից՝ սոցիոլոգիական և իրավական:

Իրականացված հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են ինչպես թիրախային խմբերի ներկայացուցիչների տեսակետերը, ընկալումները, կենսա-փորձը՝ կանանց իրավունքների վրա կորոնավիրուսի համավարակի ազդեցու-

թյան վերաբերյալ, այնպես էլ Կոալիցիայի անդամ կազմակերպությունների գնահատականներն ու դիրքորոշումները՝ ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Հետազոտությունը դեկտեմբերին ներկայացվել է շահագրգիռ կողմերին, որոնց թվում էին Կառավարության տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչները, քաղհասարակության ներկայացուցիչները և այլք:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր՝ հոկտեմբերի 1

2010 թվականից ի վեր Կոալիցիան հոկտեմբերի 1-ը հռչակել է և նշում է որպես ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր: Կոալիցիան ամեն տարի կազմակերպում և իրականացնում է հիշատակի և իրազեկման միջոցառումներ:

2021 թ.-ին Կոալցիան ՀՀ Կառավարության շենքի առջև նամակ փոխանցեց ՀՀ վարչապետին, որտեղ շարադրված էին Հայաստանում ընտանեկան բռնության ոլորտում առկա լրջագույն բացերը: Կոալիցիայի անդամները նաև պահանջեցին, որ պետությունը հստակ քայլեր իրականացնի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի միջազգային և ներպետական իրավական կառուցակարգերի վավերացման ու բարելավման ուղղությամբ:

Այնուհետ Կոալիցիայի անդամները Կառավարության մասնաշենքին հարակից այգում ծառերի վրա կարմիր ժապավեններ փակցրին, որոնց վրա գրված էին վերջին 11 տարիների ընթացքում ամուսնու կամ ընկերոջ կողմից սպանված շուրջ 80 կանանց անունները, նրանց ծննդյան ու

մահվան տարեթվերը: Կոալիցիայի անդամները անցորդներին բաժանեցին նաև ընտանեկան բռնության մասին իրազեկող թռուցիկներ:

Իսկ արդեն երեկոյան երիտասարդ երգիչների և պարողների մասնակցությամբ տեղի ունեցավ «Դիմադրության պար» ներկայացումը, որին էլ հաջորդեց ավանդական դարձած մոմավառությունը՝ ի հիշատակ ընտանեկան բռնության զոհերի:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակը սկսվում է նոյեմբերի 25-ից, ավարտվում դեկտեմբերի 10-ին: Մինչև դեկտեմբերի 10-ն անցկացվող միջոցառումների շրջանակում մարդկությունը համատեղում է իր ջանքերն ընդդեմ գենդերային բռնության: Կոալիցիան 2021 թ.-ին ևս միացավ համաշխարհային այս շարժմանը և իրականացրեց բազմապիսի միջոցառումներ՝ թե՛ առցանց, թե՛ դեմ առ դեմ ֆորմատներով:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակի միջոցառումների ցանկ

Նոյեմ. 25- Դեկտ. 10	ILO190 Կոնվենցիայի վավերացմանն ու իրազեկմանն ուղղված առցանց արշավ Առցանց
Նոյեմ. 30	«ՄԻԱՎորենք ջանքերը. նոր մարտահրավերներ ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերի համար» կոնֆերանս NCID-Avan/Ինֆեկցիոն հիվանդությունների կենտրոն
Դեկտ. 3	Կազմակերպության շահառու կանանց հաջողված պատմությունների մասին տեսահոլովակների պատրաստում և լուսաբանում Առցանց
Դեկտ. 6	«SafeYou» հավելվածի նորացված տարբերակի ներկայացում Իբիս հյուրանոց
Դեկտ. 9	Կանանց նկատմամբ բռնության լուսաբանումը հայկական ԶԼՄ-ներում 2019-2020թթ. հետազոտության ներկայացում Իբիս հյուրանոց
Դեկտ. 10	16-օրյակին նվիրված քննարկում Գյումրու Երկխոսությունների Մեդիա կենտրոնում + Առցանց հեռարձակում
Դեկտ. 10	Կանանց տարբեր հիմնախնդիրների շուրջ կանանց մոնոլոգ

Կոալիցիան Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակի շրջանակներում իրականացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության 190-րդ՝ բռնության և ոտնձգությունների մասին կոնվենցիայի դրույթների մասին ակցիա: Ամեն օր Կոալիցիան տարբեր գերատեսչություններին ուղղված առաջարկություններ ու պահանջներ է ներկայացրել գենդերային բռնության կոնկրետ խնդիրների առնչությամբ:

1 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք քրեականացնել ընտանեկան բռնությունը:

Քրեական օրենսգրքում ընտանեկան բռնության համար չի սահմանվում պատիժ ու պատասխանատվություն ո՛չ որպես առանձին հանցատեսակ, ո՛չ որպես պատիժը ծանրացնող հանգամանք:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

2 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք բարելավել ընտանեկան բռնության օրենքը:

Օրենքի ընդունումից հետո առնվազն մեկ կին սպանվել է զուգընկերոջ կողմից: Զուգընկերային հարաբերությունները օրենքում ամրագրված չեն:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

3 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք ընտանեկան բռնության օրենքից հեռացնել հաշտեցումը:

Պետության գործառույթն անհատին պաշտպանելն է, ոչ թե անհավասար կողմերին արհեստականորեն «հաշտեցնելը»:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

4 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք ընտանեկան բռնության օրենքից հեռացնել նախազգուշացումը:

Փաստացի, նախազգուշացումը ավելի քան 2 անգամ գերազանցում է անհետաձգելի միջամտության որոշումների նկատմամբ, իսկ բռնության ենթարկված անձը մնում է բռնարար միջավայրում:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

5 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք ներդնել անհրաժեշտ մեխանիզմներ՝ ընտանեկան բռնության օրենքով սահմանված պաշտպանական միջամտության որոշումները արագ կայացնելու նպատակով:

Պաշտպանական միջամտության որոշումների դանդաղ ընթացքը կարող է խլել կյանքեր:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

6 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք պատշաճ կերպով իրականացնել բռնություն գործադրած անձանց հաշվառում և մշտադիտարկում:
ՀՀ ոստիկանության կողմից կայացված 1173 պաշտպանության միջոցներից խախտվել է 60-ը:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

7 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք օրենքից հեռացնել «ավանդական արժեք» հասկացությունը:

«Ավանդական արժեք» եզրույթն իրավական կատեգորիա չէ: Նման ձևակերպումը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

8 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք ձևավորել գենդերային բռնության գործերով մասնագիտացված դատարաններ:

Մասնագիտացված դատարանը կառաջնորդվի զոհակենտրոն մոտեցմամբ, ինչը կնպաստի կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտների վերացմանը:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

9 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք ունենալ գենդերային բռնության դեպքերի վերաբերյալ համապետական վիճակագրություն:

Վիճակագրությունը պետք է հավաքագրվի նաև հաշմանդամության տեսանկյունից և ներառի տեղեկատվություն բռնության ենթարկված անձի հաշմանդամության տեսակի մասին:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

10 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք պետական սոցիալական աջակցության կենտրոնների շինություններն ու մատուցվող ծառայությունները դարձնել մատչելի և ներառական հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

11 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք բռնության ենթարկված անձանց ծառայություն մատուցող մարմինների, այդ թվում՝ ոստիկանների, սոցիալական աշխատողների, հոգեբանների վերապատրաստման դասընթացները դարձնել ներառական և զգայուն՝ հաշմանդամության, գենդերային հիմնահարցերի և խոցելի խմբերի պաշտպանության տեսանկյուններից:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

12 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք գործուն քայլեր ձեռնարկել ընտանեկան բռնության օրենքը և կիրառման մեխանիզմները ներառական դարձնելու ուղղությամբ՝ ապահովելով լեսբի, բիսեքսուալ և տրանս անձանց պաշտպանությունը բռնությունից:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

13 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք պետական մակարդակով ներդնել կնասպանության կանխարգելման և արձագանքման մեխանիզմներ:

Կնասպանությունը կանանց նկատմամբ բռնության ծայրահեղ դրսևորումներից է, որի բացահայտման և կանխարգելման մեխանիզմներն ու մոտեցումները խիստ թերի են:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

14 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք օրենքի կարգավորման շրջանակից հեռացնել համերաշխություն հասկացությունն ու համերաշխության վերականգնման վերաբերյալ առկա բոլոր իրավակարգավորումները:

Դրանք փոփոխում են օրենքի բուն ուղղվածությունը բռնության ենթարկված անձանց պաշտպանությունից դեպի համերաշխության վերականգնում:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

15 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք պարբերաբար մշակել և իրականացնել զգայուն և ներառական ծրագրեր՝ ուղղված ընտանեկան բռնության կանխարգելմանն ու հասարակության իրազեկվածության բարձրացմանը:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

16 օր ՀՀ կառավարություն,

Պահանջում ենք գործուն քայլեր ձեռնարկել Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան վավերացնելու ուղղությամբ:

Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ

Կոալիցիան նաև արշավը բարձրաձայնել է սոցիալական մեդիայի էջերում՝ ուղիղ եթերների միջոցով, մասնակցել է տարբեր հաղորդաշարերի:

Կոալիցիայի անդամ «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ն, համագործակցելով «Շանթ» հեռուստաընկերության հետ, իրականացրել է «Զրույցներ կանանց իրավունքների մասին» հեռուստահաղորդումների շարքը: Հեռուստահաղորդումների հյուրերը, որոնք տարբեր ոլորտների փորձագետներ են՝ պետական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ, քաղհասարակության ներկայացուցիչներ, ոստիկանության համակարգի ծառայողներ և ուրիշներ, տարբեր տեսանկյուններից խոսում են կանանց իրավունքների, կանանց իրավունքների ոլորտում առկա խնդիրների, ինչպես նաև այդ խնդիրների հնարավոր լուծումների, լուծման ուղղությունների և հանձնառությունների մասին:

3-րդ հաղորդում

13-րդ հաղորդում

14-րդ հաղորդում

Հանդիպումներ և դասընթացներ Շիրակի, Լոռու ու Տավուշի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Կոալիցիայի անդամ «Սպիտակի Հելսինկյան խումբ» ՀԿ-ն Տավուշի, Շիրակի և Լոռու մարզերում կազմակերպել և իրականացրել է 30 հանդիպում տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային համայնքներում պետական (համայնքապետարանների, դպրոցների, բուժհաստատությունների աշխատակիցներ և ուրիշներ) ու ՔՀԿ կառույցների համար: Առավել քան 200 ներկայացուցիչներ մասնակցել են «Ընտանեկան բռնությունը կանխելու համատեղ ուղիների ձևավորում» թեմայով դասընթացին և քննարկումներին:

ԳԼՈՒԽ 3.

ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԹԵՄԱՆԵՐԻ ՇՈՒՐՋ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ

Կոալիցիայի կարևորագույն ռազմավարական ուղղություններից է կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային հիմքով բռնության և հարակից թեմաների շուրջ տարբեր սուբյեկտների և գործորդների կարողությունների զարգացումը, Կոալիցիայի ինստիտուցիոնալ զարգացումը և համակիրների ցանցի ընդլայնումը: Կոալիցիայի կարողությունների զարգացումը կանանց և աղջիկների գենդերային բռնության և վերջինիս դրսևորումների կանխարգելման համար կարևոր է նաև ինտերսեկցիոնալության համատեքստում՝ ներառականության և գենդերային զգայունության բարձրացմամբ:

Կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության թեմայի լուսաբանման մշտադիտարկում և ձեռնարկի ստեղծում

2021 թ.-ին Կոալիցիան մշակել է երկու կարևորագույն փաստաթղթեր՝ «Կանանց նկատմամբ բռնության լուսաբանումը հայաստանյան ԶԼՄ-ներում 2019-2020 թվականներին» վերլուծությունը և «Խնդիրներ և խորհուրդներ կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության թեմայի լուսաբանման վերաբերյալ» լրագրողների համար ձեռնարկը: Կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության վերաբերյալ հայաստանյան ԶԼՄ-ներում 2019-2020 թվականներին հրապարակված նյութերի հիման վրա կատարված վերլուծությունն ուսումնասիրում է հայաստանյան զանգվածային լրատվական միջոցներում կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության թեմայի լուսաբանման միտումները, դրանց հետ կապված էթիկական և այլ խնդիրները: Հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակները մշակել և հանրային քննարկման ժամանակ ներկայացրել են խորհուրդներ լրագրողներին ու լրատվամիջոցներին, ինչպես նաև առաջարկություններ բոլոր շահագրգիռ կողմերին: Այս վերլուծության հիմա վրա մշակվել և կազմվել է «Խնդիրներ և խորհուրդներ կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության թեմայի լուսաբանման վերաբերյալ» լրագրողների համար ձեռնարկը՝ որպես կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնությունը թեմայի պրոֆեսիոնալ լուսաբանման համար օգտակար գրականություն հայաստանյան զանգվածային լրատվամիջոցների, լրագրողների և խմբագիրների համար:

Կանանց տնտեսական զարգացում

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ի հետ իրականացրել է կանանց տնտեսական զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ նպատակ ունենալով բարձրացնելու կանանց տնտեսական անկախությունը և մրցունակությունը աշխատաշուկայում: Իրականացված գործողությունների շրջանակում Շիրակի մարզի մոտ 30 կանայք հնարավորություն են ունեցել մասնակցելու դասընթացների, վերամասնագիտանալու կամ ձեռք բերելու կոնկրետ մասնագիտական հմտություններ հետևյալ մասնագիտություններով՝ գրաֆիկ դիզայն, հրուշակագործություն, մատնահարդարում, վարսահարդարում, սոցիալական ձեռ-

նարկատիրություն և այլն: «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ն ծրագրի ավարտին նաև ծրագրի որոշ մասնակիցների համար գնել է անհրաժեշտ տեխնիկա և գույք՝ ստացած գիտելիքները աշխատանքի մեջ ներդնելու համար (վարսահարդարման պարագաներ, հրուշակագործության գործիքներ, համակարգիչ, և այլն):

Առողջապահական ծառայություններ սեռական և ընտանեկան բռնություն վերապրածներին

Անցնող տարվա ընթացքում Կոալիցիան տրամադրել է առողջապահական ծառայություններ սեռական բռնության և սեռական ոտնձգությունների ենթարկված 26 կանանց: Նման առողջապահական միջամտությունը ոչ միայն հնարավորություն է տվել լուծել առողջական խնդիրները, այլ նաև կոտրել բռնության շղթան, գտնել աշխատանք և վերսկսել կյանքը նոր էջից:

Առողջապահական հաստատությունների համար կարողությունների զարգացման դասընթացներ սեռական բռնության և գենդերային հիմքով բռնության թեմաներով

Կոալիցիայի անդամ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել և իրականացրել է 22 դասընթաց ՀՀ մարզերում բժշկական անձնակազմի հետ սեռական բռնության և գենդերային հիմքով բռնության թեմաներով, որոնց մասնակցել են ընտանեկան բժիշկներ, գինեկոլոգներ և մանկաբույժներ: Դասընթացներն անցկացվել են Արմավիրի մարզում (Արմավիրի և Էջմիածնի բժշկական կենտրոններ), Տավուշի մարզում (Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի բժշկական կենտրոններ), Կոտայքի մարզում (Աբովյանի, Հրազդանի, Չարենցավանի, Եղվարդի բժշկական կենտրոններ) և Շիրակի մարզում (Գյումրու և Արթիկի բժշկական կենտրոններ): Դասընթացներին մասնակցել են նաև գյուղական համայնքների պոլիկլինիկաների անձնակազմից ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ դասընթացին մասնակցել է մոտ 300 բուժաշխատող:

Դասընթացների ժամանակ քննարկվել են հետևյալ թեմաները՝

- սեռական բռնության խնդիրները, հիմնական տեսակները և առանձնահատկությունները,
- սեռական բռնության հետևանքները՝ հոգեբանական, վարքաբանական, հետտրավմատիկ սթրեսային խանգարում,
- սեռական բռնության հետևանքները՝ ֆիզիկական և սեռական խանգարումներ,
- դեպքերի քննարկումներ, մասնագիտական տարբեր փորձառությունների քննարկում:

Ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության խնդրի վերաբերյալ համապարփակ վերապատրաստման ուղեցույցի մշակում

Կոալիցիայի անդամ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն մշակել է ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության խնդրի վերաբերյալ համապարփակ վերապատրաստման ուղեցույց՝ սահմանելու չափորոշիչները, ընդհանուր լեզուն և մոտեցումները այս թեմաների շրջանակներում դասընթացների կազմակերպման և իրականացման համար: Ուղեցույցը մշակվել է՝ հիմքում ունենալով միջազգային լավագույն պրակտիկայի վերաբերյալ արված հետազոտության արդյունքները, և պետք է դառնա սոցիալական աշխատողների և շահերի պաշտպանության մասնագետների վերապատրաստման նյութ՝ ընտանեկան բռնության, գենդերային բռնության ենթարկված անձանց հետ արդյունավետ աշխատանքի համար: Ուղեցույցը նաև հավակնում է դառնալ հիմք Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար, որպեսզի այն հետագայում ներառվի սոցիալական աշխատողների համար համալսարանական կրթության, ոչ ֆորմալ կրթության և վերապատրաստման ծրագրերում:

Կոալիցիան նշում է տասնամյակը

Դիտեք «Ընդդեմ կանանց նկատմամբ բռության» կոալիցիայի 10 տարվա պայքարի մասին պատմող ֆիլմը, ինչպես նաև անդամների և համախոհների պատմությունները, թե ինչու են միացել կոալիցիային:

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Հաշվետվության հեղինակ՝ Նվարդ Մարգարյան

Հաշվետվությունը կազմվել է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա, 2022 թ.

www.coalitionagainstviolence.org